



Università
Ca' Foscari
Venezia

Dipartimento
di Studi sull'Asia
e sull'Africa
Mediterranea

Department
of Asian and North
African Studies

23 Փետրուար 2011

Յարգարժան Տիկին
Հրանտյ Յակոբեան
Նախարար
ՀՀ Սփիւռքի Նախարարութեան
Երեւան

Ազնուափայլ Տիկին Նախարար

Palazzo Vendramin
dei Carmini
Dorsoduro, 3462
30123 Venezia - Italy

T+39 0412349511
F+39 0412349589

Ca' Cappello
San Polo, 2035
30125 Venezia - Italy

T+39 0412348811
F+39 0415241847

www.unive.it/dsaam

C.F. 80007720271
P. IVA 00816350276

Երբ անցեալ Օգոստոսին հասաւ կիսապաշտօն լուրը թէ ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը բարեհաճած է պարզեատրել տրուալս, Վենետիկի Կա Ֆոսկարի Համալսարանի Հայ Լեզուի և Մշակոյթի մեր ամառնային խտացեալ Դասընթացքի քսանհինգամեակին առթիւ, Բ. դարու մեծ Հայերէն Ուիլիլմ Սարոյեանի մեղալով, ուրախութիւնը՝ զոր այդ բարեպատեհ լուրը կ'առթէր ջանացի բաշխել շուրջիններուս - ուսուցիչներ, գործակիցներ, ընթացորդներ, բարեկամներ - , վերապահելով անձիս պատասխանատւութեան կոչը և նոր արշաւներու մարտահրաւերը զոր այդ պարզելը միանգամայն կը խորհրդանշէր:

Ապա, անցեալ Հոկտեմբերին բերկրառիթ պատեհութիւնն ունեցայ անձամբ ողջունելու Ձեզ՝ մեր Մայր Ոստանի Ձեր գրասենեակում, վայելելով Ձեր ջերմ հիւրասիրութիւնը: Մեծապէս թելադրիչ ու հրահանգիչ էր նաեւ գաղափարներու փոխանակութիւնը՝ զոր այդ առթիւ ունեցանք և զոր կը յուսամ շարունակել յաջորդաբար, թղթակցաբար ներկայացնելով Ձեր բարձր գնահատանքին համեստ տեսութիւններս ազգային որոշ հարցերու շուրջ:

Այս քանի մը տողերը կը փափաքիմ որ ըլլան այսօր լոկ թոթովուն արտայայտութիւնը շնորհակալութեան ու երախտեաց խոր զգացումներուն, որ կը համակեն զիս, նաեւ յանուն բոլոր աշխատիկցներուս, որոնց երիցագոյնները ուզած էք պատուել միաժամանակ յատուկ Պատուոյ Գիրով: Այս տողերը, թող լինին նաեւ արտայայտութիւնը՝ Հայ Տառին ու Տիպին ծառայութեան մէջ հաւատարմութեան ու յարատեւութեան առաջադրանքիս՝ որով նայում եմ դէպի ապագայ տարիները, զոր Բարձրեալին Նախախնամութիւնը պիտի հաճի շնորհել ինձ:

Ահա՛ այս զգացումներով է որ ընդունեցայ 12 Փետրուար Շաբաթ երեկոյեան, իմ յոյժ սիրելի ու մեծավաստակ գործընկերուի և բարեկամ Պրոֆ. Գաբրիելլա Ուլուիոճեանի հետ միասնաբար, Հռոմի մեր Դեսպան Տիար Ռուբէն Կարապետեանի ձեռքերէն Սարոյեանի հայրենատուր մեղալը:

Հաճեցէք ընդունիլ, Տիկին Նախարար, վերանորոգ հաւաստիքը երախտիքիս ու ջերմ գնահատանքիս, միացած սրտարուխ բարեմաղթութիւններուս Ձեր անձին, գործունէութեան, Ձեր բոլոր թանկագին աջակիցներուն և առ հասարակ մեր Մայր Հայրենիքին ու վովանդակ Հայութեան բարօր և անդորր բարգաւաճման համար:

Յարգանքով *Յ. Լ. Է. Ը.*

Յ. Լ. Է. Ը.
Յ. Լ. Է. Ը. Բեան

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՐՈՒԹՅԱՆ
Մանց թիվ 457-11
«25» 02 20 11 թ.